— Այդ ես տեսա... — ասաց Ասլանը ժպտելով:

Այդ միջոցում ներս մտաւ մի լաւ հագնուած մանկլաւիկ, մի ձեռքում բռնած ունէր արծաթեայ փոքրիկ սրճամանը, միւս ձեռքում՝ մի գեղեցիկ արծաթեայ մատուցարան, որի վրայ դրած էին երկու չինական հիանալի ֆինջաններ, նոյնպէս արծաթեայ տակերի մէջ: Նա, տեղային սովորաթեան համեմատ, լցրեց ֆինջաններից մէկը, նախ տուեց փաշային: Իսկ փաշան, իր հիւրին առանձնապէս պատուելու համար, իր ստացած ֆինջանը իր ձեռքով տուեց նրան, եւ Ասլանը շնորհակալութեամբ ընդունեց: Փաշան վեր առեց երկրորդ ֆինջանը:

Մանկլաւիկը սենեակից դուրս գալու ժամանակ լռութեամբ անցաւ իմ մօտից եւ թեւքով կամաց իմ կողքին բօթեց. դա արդէն նշան էր, որ ես դուրս գամ նախասենեակը, որ ինձ էլ ղահուէ խմացնէ: Բայց ես չշարժուեցայ իմ տեղից: Այդ շատ զարմացրեց նրան:

Ղահուէից յետոյ մի այլ մանկլաւիկ, աւելի լաւ հագնուած, նարգիլէ ներս բերեց, որը իր գեղեցկութեամբ բոլորովին ապշեցրեց ինձ: Նրա գլուխը, որի մէջ թամբաքու եւ կրակ էին դրած, շինուած էր զուտ ոսկուց եւ զարդարած թանկագին քարերով. օձապտոյտ «բուլղարիիէ ծայրը շինած էր մի թզաչափ երկարութեամբ դեղին սաթից, որ նոյնպէս բռնուած էր ոսկու մէջ: Նարգիլէի տակը, որի մէջ ջուր էր ածած, շինուած էր ադամանդի նման փայլուն բիւրեղից, որ զարդարուած էր գոյնզգոյն ծաղիկներով: Փաշան նարգիլէի վերաբերութեամբ նոյն քաղաքավարութիւնը գործ դրեց, ինչ որ ցոյց տուեց ղահուէի ժամանակ, այսինքն՝ նախ ինքը ընդունեց սպասաւորից, յետոյ իր ձեռքով առաջարկեց Ասլանին:

— Դուք արդէն փոքր ի շատէ ընտելացել էք մեր սովորութիւններին, — ծիծաղելով նկատեց փաշան: — Ինչպէ՞ս է թւում ձեզ մեր նարգիլէն:

— Ես խիստ ախորժանոք ծխում եմ, — պատասխանեց Ասլանը, — Պոլսում սովորեցի:

Ղահուէն եւ նարգիլէն ընդհատեցին նրանց խօսակցութիւնը: Փաշան, կամենալով շարունակել այն, վարպետութեամբ հարցրեց.

-Հա, մոռացայ, ինչ բանի վրայ էինք խօսում:

-Դուք ասում էիք, որ հիմա գառն ու գայլը միասին են ապրում...

— Այո՛, հէնց այստեղ ընդհատուեցաւ մեր խօսակցութիւնը: Որովհետեւ սիրտս լցուած է, թոյլ տուեցէք ինձ, պարոն բժշկապետ, փոքր-ինչ շատախօս լինել: Եւրոպան մեզ մեղադրում է մեր անմարդասիրական վարմունքի մասին քրիստոնեաների հետ, իբր թէ նրանք ճնշուած են մեր երկրում, հալածո-